

## ԿԱՐԾԻՔ

### ՀԱՄԲԴՈՒՅԱ ԿԱՄԻԱՐԻ «ՄԵԾԱԾԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԽԱՆԴԻՐՆ ԻՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐԳՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԱՏԵՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Յուրաքանչյուր երկրի համար կրթությունը, նախ և առաջ, նրա անվտանգության գրավականն է, նրա զարգացման համար կարևոր միջոցն ու չափանիշը, դա պետության համար ամուր հիմք է նրա հաջող գործունեության զարգացման համար, որը մեծ նշանակություն ունի ինչպես ներքին կայունության, այնպես էլ միջազգային հեղինակության ձեռքբերման համար։ Այս համատեքստում շատ է կարևորվում մեծահասակների կրթությունը։ Նախ և առաջ, կրթված մեծահասակներն առավել շատ են նպաստում երկրի տնտեսական զարգացմանը, սոցիալական բարեփոխումներին՝ դառնալով կարողունակ ներուժ մասնագիտական տարբեր ոլորտներում, հանդիսանում են հասարակական կյանքի ակտիվ մասնակիցներ՝ ամրապնդելով, պահպանելով իրենց ազգային ինքնությունը, փոխգործակցելով համաշխարհային հանրության հետ։ Այսպիսով, մեծահասակների կրթությունը դա ոչ միայն նրանց անձնական, այլ նաև հասարակական խնդիրներն են, քանի որ այն նպաստում է երկրի կայուն զարգացմանը և բարգավաճմանը։ Նկատենք, որ ցանկացած կառուցողական փոփոխություն անհնար է իրականացնել առանց կրթված մեծահասակների, հատկապես, այսպես կոչված, երրորդ երկրներում, որտեղ մարդկանց մեծ մասը չունի գիտական, մասնագիտական կարողություններ։ Այդ երկրների շարքին է պատկանում Իրանը, որը, ելնելով 2005 թվականի «Իրանի բարգավաճման 20-ամյա հեռանկարային փաստաթղթի» դրույթներից, իր առջև խնդիր է դրել մինչև 2025 թվականը դառնալու զարգացած և առաջանցիկ երկիր տարածաշրջանում, և, հետևաբար, Իրանի համար կրթության համակարգի զարգացումը դառնում է առաջնահերթություն և գերակա նպատակ։ Եվս մեկ կարևոր փաստ՝ 2009 թվականին Բրազիլիայի համագումարում Իրանը հանձն էր առել ստեղծելու մեծահասակների կրթության համակարգ։ Սակայն մինչև հիմա դեռ չկան բավարար արդյունքներ, հետևաբար, Իրանի մեծահասակների կրթության ուսումնասիրությունը, նրա խնդիրները, բացքողումները շարունակում են մնալ հասարակության և կրթության համակարգի ուշադրության կենտրոնում, որով և պայմանավորված է տվյալ հետազոտության թեմայի արդիականությունը։

Հետազոտության թեման հստակ ձևակերպված է, այն արտացոլում է աշխատանքի հիմնական ուղղվածությունը և այն վերջնարդյունքը, որին ձգտում է հետազոտող՝ հանգամանորեն ուսումնասիրելով մեծահասակների կրթության ներկա վիճակն ու պայմաններն Իրանում և վերլուծելով այս ոլորտի խնդիրներն ու մարտահրավերները, նաև առաջադրելով մեծահասակների կրթության բարելավման ուղիներ:

Հետազոտության նպատակից բխում են իրար հետ տրամաբանորեն կապված, իրար ձիշտ հաջորդող խնդիրները՝ թվով հինգը:

Ակնհայտ է գիտական հետազոտության գիտական նորույթը. այն հիմնավորված է, հաստատված տեսական վերլուծություններով, սոցիոլոգիական հարցման արդյունքներով: Նրա գիտական նշանակության մասին է վկայում նաև այն, որ նորույթը ձևակերպված է շատ հստակ: Այդպես էլ հստակ, կոնկրետ են ներկայացված պաշտպանության դրույթները, որոնք ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն և ընդլայնում են պատկերացումները հետազոտության առարկայի մասին: Դրանք անմիջականորեն կապված են հետազոտության նպատակի, խնդիրների հետ:

Հեղինակն իրեն բնորոշ կոնկրետ, հստակ ձևով նշել է հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, որը խոսում է հետազոտության արդյունքների լայն կիրառման մասին:

Ատենախոսության ծավալը կազմում է 177 համակարգչային էջ: Այն բաղկացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացություններից, 26 աղյուսակից, 2 գծապատկերից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է աշխատանքի 4 գլուխներում:

Առաջին գլուխը՝ «Իրանի կրթության համակարգը» վերնագրով, ունի 4 ենթագլուխ, որոնք տրամաբանորեն փոխկապված են իրար հետ:

Առաջին ենթագլուխ՝ «Իրանի կրթության համակարգի նպատակները և նրա գործառույթները», քննության են ենթարկվել Իրանի կրթության համակարգի ընդհանուր նպատակները, որոնք ավելի տեսանելի դարձնելու նպատակով խմբավորվել են տարբեր ուղղություններով՝ զաղափարախոսական, բարոյական, գիտակրթական, մշակութային, գեղարվեստական, հասարակական, Էկոլոգիական, առողջապահական, քաղաքական, տնտեսական, որոնք մանրամասվում են կրթության բոլոր մակարդակներում:

Հեղինակը նշում է, որ «Ժամանակակից աշխարհում ուսումնակրթական հաստատությունները համարվում են հասարակական նպատակների իրագործման կարևոր միջոցներ, և նրանցից ակնկալվում է, որպեսզի պատրաստեն տվյալ հասարակության սոցիալ-տնտեսական, մշակութային ու քաղաքական զարգացման ենթահողը» և համարում է, որ այդ ակնկալիքների բավարարման ուղղությամբ «կրթության համակարգի խնդիրները, նպատակներն ու գործառույթները ներառում են լայն շրջանակ»: Կրթության ֆորմալ համակարգի գլխավոր գործառույթներից է համարում հասարակության գրագիտության մակարդակի բարձրացումը, հմտությունների ձևավորումն ու ընդլայնումը, ամբողջական հասարակության կերտումը, միավորումն ու համախմբումը, որոնք, հեղինակի կարծիքով «այսօր ավելի ցայտուն են երևում հատկապես բազմազգ երկրներում, կամ այն երկրներում, որտեղ գաղթականներ են ընդունում, ինչպես նաև ազգային ինքնության պահպանման և գոյատևման խնդիր ունեցող ժողովուրդների համար»:

Առաջին գլխի երկրորդ՝ «Իրանի կրթության զարգացման համառոտ պատմությունը» ենթագլխում հեղինակը ներկայացնում է Իրանի կրթության պատմությունը, զարգացման կարևոր փուլերը, կրթադաստիարակությունը Հին Իրանում, կրթությունը 20-րդ դարի Իրանում, Իրանի կրթության նորագույն համակարգը, որտեղ ներկայացված են նաև ներկայումս Իրանի կրթության ոլորտը կառավարող նախարարություններն ու կազմակերպությունները:

Իրանի կրթության համակարգը համակողմանի ուսումնասիրելու նպատակով հետազոտողը քննության է ենթարկել հետևյալ հարցերը՝ «Հանրակրթությունն Իրանում» (1.3 ենթագլուխ) և «Բարձրագույն կրթությունն Իրանում» (1.4 ենթագլուխ): Համբուկա Կամիարը նշում է, որ հանրակրթությունն Իրանում ֆորմալ կրթության մակարդակներից մեկն է, «որն իր ծավալով և ընդգրկվածությամբ ամենամեծն է»: Այս ենթագլխում բավականին խորը և համակողմանի է վերլուծվում հանրակրթությունն Իրանում՝ համակարգի կառուցվածքը և կառավարումը, այս համակարգում եղած փոփոխությունները, կրթական աստիճանները, դրանց նպատակները, գնահատման համակարգը և այլն:

4-րդ ենթագլխում՝ «Բարձրագույն կրթությունն Իրանում», ի շնորհիվ հեղինակի կողմից այս հարցի բազմակողմանի վերլուծությանը, ձևավորվել է ամբողջական պատկերացում Իրանի բարձրագույն կրթության մասին՝ սկսած նրա պատմությունից

մինչև մեր օրերը, նրա կառավարման, աստիճանների, բաժինների և այլ կարևոր հարցերի մասին:

Աշխատանքի երկրորդ գլուխը կրում է «Մեծահասակների կրթության առանձնահատկությունները» վերնագիրը: Այն բաղկացած է 7 ենթագլխից, որոնք միասին տալիս են ամբողջական, համակողմանի պատկեր մեծահասակների կրթության մասին: Առաջին ենթագլխում՝ «Կրթություն ամբողջ կյանքի համար կամ ցյանս կրթություն», հեղինակը դիտում է այդ կրթության էությունը, նպատակը, շրջանակները: Ուսումնասիրելով ցյանս կրթության և ուսումնառության համակարգն Իրանում՝ հեղինակը եզրակացնում է, որ «չնայած ցյանս ուսումնառության ապահովման ուղղությամբ Իրանում գործադրվում են տարբեր ծրագրեր ու աշխատանքներ, սակայն Իրանի ցյանս ուսումնառության ազգային համակարգը չունի ներդաշնակություն և ամբողջականություն», և որ «այն շատ հեռու է բավարար մակարդակից»:

2-րդ ենթագլխում՝ «Մեծահասակների կրթության գլխավոր հասկացությունները», անդրադարձ է կատարվել գլխավոր հասկացությունների սահմանումներին, ինչը թույլ կտա ձեսավորելու հատուկ ընկալում, խուսափելու տարրմբոնումներից և այլն: Այս ենթագլխում հանգամանորեն ուսումնասիրվել է «մեծահասակների կրթության» հասկացության սահմանումը, մեծահասակների առանձնահատկությունները՝ տարբեր տեսակի տարիքը (ժամանակային, կենսաբանական և այլն), ֆիզիկական փոփոխությունները (տեսողական, լսողության, արագության և հակազդում), մտավոր առանձնահատկությունները, հուզական և սոցիալական փոփոխությունները, ստեղծարարության և նորարարության կարողությունները և մյուսները, որոնք նկատում է հեղինակը և որոնք ուղղակիորեն ազդում են մեծահասակների ուսումնառության գործընթացի վրա:

Այս հետազոտության ուժեղ կողմերից ենք համարում տվյալ ոլորտին առնչվող և լայն կիրառում ունեցող մի շարք եզրույթների ներկայացումը, օրինակ՝ 2.3 «Անդրագոգիկայի սահմանումը»: Հեղինակը ներկայացրել է եզրույթի պատմական զարգացումը, տարբեր մոտեցումները, մեկնաբանությունները: Դրանց վերլուծության արդյունքում հանգել է հետևյալ եզրակացությանը, որ «մեծահասակների կրթության հիմնախնդիրն առավել կազմակերպված վերլուծելու և լավ ըմբռնելու համար կարող ենք բոլոր սահմանումներն ամփոփել երեք խմբում»:

Հեղինակը նշել է ամենալայն իմաստով, տեխնիկական իմաստով և արել տրամաբանական ձիշտ հետևություն. «Երրորդ բնորոշմամբ, բոլոր այս գործընթացներն ու աշխատանքները համադրվում են սոցիալական գործունեության անվան ներքո»: Այսպիսով, նշելով կրթության սոցիալական նշանակությունն ու արժենորելով այն մեծահասակների կյանքում, որոշարկելով մեծահասակների կրթության բազմակողմանիությունը՝ նա այստեղ անդրադարձել է մի շարք այլ եզրույթների և՝ ֆորմալ կրթություն, ոչ ֆորմալ կրթություն, շարունակական կրթություն և գրագիտություն կամ գրաճանաչություն:

2-րդ գլխի համար կարևոր նշանակություն ունի 2.4 ենթագլուխը՝ «Մեծահասակների կրթության պատմությունը», որտեղ հետազոտողն ուսումնասիրել և վերլուծել է միջազգային մակարդակով կայացած համագումարները և դրանցից ամեն մեկում ներկայացված հիմնական առանցքները, ձեռքբերումները Դանիայից (1949թ.) Մոնթեալից (1960թ.) և այլն: Ուշագրավ են հեղինակի համեմատությունները՝ մեծահասակների կրթության վերաբերյալ զարգացած երկրներում և թույլ զարգացած երկրների միջև: Նա նշում է, որ տարբեր երկրներում կան տարբեր շեշտվածություն և ուղղվածություն: Յուրաքանչյուր երկիր, հիմնվելով այս կամ այն ընկալմանը և նաև հաշվի առնելով իր պատմամշակութային առանձնահատկություններն ու կրթության համակարգի զարգացածության աստիճանը, որդեգրում է առանձին մոտեցում և ընտրում այս կամ այն գերակայությունը: Հեղինակի այս եզրահանգման հետ դժվար է չհամաձայնվել:

Հետազոտության խնդիրներից մեկում (2-ում) դրված է վերլուծել մեծահասակների կրթության նպատակները, որի լուծումը տեղ է գտել 2.5 ենթագլուխը՝ «Մեծահասակների կրթության նպատակները»: Եվ հեղինակը, հիմնվելով Հարբնեղ Բոլանի հետազոտության վրա, մեծահասակների կրթության նպատակները բաժանել է մի քանի խմբերի՝ քաղաքական, մշակութային, կրթական, սոցիալական, տնտեսական, կրոնական և գաղափարախոսական:

2.6 ենթագլուխը՝ «Մեծահասակների կրթության սկզբունքները», Համիլոնեա Կամիարը մեծահասակների կրթության ծրագրերի և նախագծերի մշակման համար ընդգծել է մի քանի սկզբունք, օրինակ՝ ուսուցման ամբողջականության և շարունակականության սկզբունք, ուսուցման անհրաժեշտ շեմի սկզբունք, միավորման սկզբունք և այլն (թվով 9 սկզբունք): Այս սկզբունքները ներկայացնելու համար հետազոտողը հաշվի է առել մի քանի կարևոր գործոններ. մեծահասակներն ունեն

աշխատանքային ու սոցիալական պատասխանատվություններ, նրանց ազատ ժամանակն ավելի քիչ է, նրանց հիշողությունն ու յուրացնելու կարողությունն ավելի քիչ է և այլն: Սկզբունքների հիմնավոր լինելու մասին խոսում է այն փաստը, որ հաշվի են առնվել ուսումնառության տարբերությունները մեծահասակների մոտ, նրանց ուսումնառության փորձի կառուցվածքը, առաջնահերթությունները և այլն:

Ենթագլուխը բովանդակային առումով շատ հարուստ է, այն իր մեջ ներառում է նաև այսպիսի կարևոր հարց՝ մեծահասակների ուսումնական ծրագրերի կազմակերպման հիմունքները (ձկուն ժամանակացույց, ձկունություն՝ տարիքի առումով, մեծահասակների կրթության կազմակերպում և այլն):

Մեծահասակների կրթության հարցի մանրակրկիտ ուսումնասիրությունը պահանջում է մեծահասակների կրթության տարբեր մոտեցումների վերլուծություն, ինչն էլ արել է հեղինակը: 2.7 ենթագլխում՝ «Տարբեր մոտեցումներ մեծահասակների կրթության հարցին», տարբեր մոտեցումների հարցի վերաբերյալ տարբեր երկրներում նա բացատրում է այսպես. «Տարբեր երկրներում նկատվում են տարբերություններ մեծահասակների կրթության նպատակների, ուղղվածության, կարիքների և առաջնահերթությունների հարցում, հետևաբար, որդեգրվում են տարբեր մոտեցումներ»:

Ատենախոսության երրորդ գլուխ վերնագիրն է. «Մեծահասակների կրթության կազմակերպումն Իրանում», որը բաղկացած է 6 ենթագլխից, որոնք տրամաբանորեն փոխկապակցված են, ձիշտ հաջորդականութամբ շաղկապված են և միասին տալիս հատակ պատկեր Իրանում մեծահասակների կրթության կազմակերպման վերաբերյալ:

3.1՝ «Իրանի բնակչության գրագիտության մակարդակը» տրվել է Իրանում գրագիտության և կրթության մակարդակի ընդհանուր պատկերը: Հարցն ուսումնասիրելու համար հեղինակը, նախ և առաջ, ներկայացնում է Իրանի ժողովրդագրական պատկերը, հետո՝ Իրանում գրագիտության, կրթության և մարդկային ռեսուրսների մասին վիճակագրական տվյալները և մեծահասակների կրթության համակարգին Իրանում հարցի վերլուծության արդյունքում հեղինակը գալիս է այն եզրահանգմանը, որ «Իրանի գործունեության մեծ մասը միայն գրագիտության ուղղությամբ է տարվել, և մինչև հիմա չի մշակվել ամբողջական ու համալիր մի համակարգ, որտեղ ներառվեն ու կազմակերպվեն մեծահասակների կրթության բոլոր մակարդակները»:

3.2 Ենթագլխում հեղինակն անդրադառնում է մեծահասակների կրթության ռազմավարություններին՝ նշելով, որ «մինչև հիմա մշակել են զարգացման հինգ ծրագրեր,

որոնք ուշադրություն են դարձնում մեծահասակների կրթության նոր ուղղություններին ու կողմերին»: Նրա համար կարևոր նշանակություն ունի ռազմավարության մեջ «Անգրագիտության վերացման մասին» ազգային փաստաթուղթը, որի գլխավոր ռազմավարության ուղղությունները նա ներկայացրել է:

Իրանում, ինչպես ցույց է տալիս տվյալ հետազոտությունը, մեծահասակների կրթության հիմնական շեշտադրումն ուղղված է հասարակության մեջ անգրագիտության կրծատմանը և վերացմանը: Այդ նպատակով է կազմվել «Անգրագիտության վերացման մասին» ազգային փաստաթուղթը, որը և որոշիչ դեր ունի մեծահասակների կրթության նպատակների, քաղաքականության և առաջնահերթությունների հարցում (3.3՝ «Մեծահասակների կրթության քաղաքականություններն ու առաջնահերթություններն Իրանում»): Հետազոտողի կարծիքով՝ «մեծահասակների կրթությունը և գրագիտության ուսուցումը սերտորեն շաղկապված են իրար, գրաճանաչությունն ու գրագիտությունը մեծահասակների կրթության հիմքն են»: Եվ դուրս գալով այս եզրահանգումից՝ նա տվյալ ենթագլխում քննության է առնում «գրագիտության» եզրույթի սահմանումը, նշում անգրագիտության տեսակները, տարբեր ընկալումներ գրաճանաչության ուսուցման վերաբերյալ:

Մեծահասակների կրթության հարցն Իրանում լիարժեք չեր ներկայացվի, եթե Համիդոեզա Կամիարը մանրամասն չուսումնասիրեր 3.4 ենթագլխում «Մեծահասակների գրաճանաչության ուսուցման կազմակերպումը և գրագիտության շարժումն Իրանում»: Հեղինակի հավելումով, ներկայացված գործն սկսվել է 1936 թվականից: Նա այս ենթագլխում ներկայացնում է նաև Իրանի գրագիտության շարժման կազմակերպության կրթական գործունեության մակարդակները մինչև 2012 թվականը: 2012 թվականի համեմատության արդյունքում երևում է, որ առաջադիր նպատակ է նվազագույնի հասցնել անգրագիտությունը, որպեսզի ամուր հենք պատրաստվի մեծահասակների կրթությունն առավել բարձր աստիճանի հասցնելու համար: Անգրագիտության դեմ պայքարի ծրագիրը, ըստ հեղինակի, մեծահասակների կրթության ամենակարևոր գործնական ծրագրերից մեկն է համարվում Իրանում: Սակայն Իրանում գործում են նաև այլ ծրագրեր ու նախագծեր, որոնք վերլուծվում են 3.5 ենթագլխում՝ «Անգրագիտության կրծատման գործնական ծրագրերը և մեծահասակների կրթության այլ նախագծերն Իրանում»: Այսինքն՝ հիմնախնդրի լուծման համար Իրանում համախմբվել են բոլոր պետական և մասնավոր կառույցները, կազմակերպությունները:

3.6 Ենթագլխում՝ «Գրագիտության և մեծահասակների կրթության խնդիրներն ու լուծման ուղիները Իրանում», հետազոտողն այս ոլորտի բոլոր դժվարություններն ու մարտահրավերները դիտարկում է երեք տեսանկյունից՝ կառուցվածքային գործոններ, կառավարչական-ռազմավարական գործոններ և միջավայրի հետ կապված գործոններ:

Կառուցվածքային գործոններից կարևորել է մեծահասակների կրթության փիլիսոփայության բացը: Կառավարչական-ռազմավարական գործոններից նշվել են աննպատակահարմար քաղաքականության որդեգրումը, կազմակերպումը և կառուցակարգը, կենտրոնացված կառավարումը: Վերջինս «սահմանափակում է քաղաքացիական ինստիտուտների և ոչ պետական կազմակերպությունների մասնակցությունը և մոռացության մատնում տեղական ու տարածաշրջանային կարիքները», - իրավացիորեն նշում է հեղինակը: Երրորդ խմբի գործոններից՝ կապված միջավայրի հետ, նա, առաջին հերթին, նշում է մասնագետի ներուժի բացը, հատկապես հեռավար մարզերում ու գյուղական շրջաններում, ֆինանսական առյուրների դժվարությունը, աղքատությունը մեծահասակների խմբերում: Այս հարցի ուսումնասիրությունն ավելի լիարժեք է դառնում, եթե հեղինակն ուշադրություն է դարձնում նաև մեծահասակ սովորողների անհատական դժվարություններին ու խնդիրներին՝ սովորելու կարողունակություն, անհատական հետաքրքրություն և մոտիվացիա, տարիք, հաշմանդամություն, ընտանեկան պարտավորություններ և այլն:

Ատենախոսության 4-րդ գլխում՝ «Հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն», իրականացվել է հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն:

Այս գլուխը, մեր կարծիքով, աչքի է ընկնում իր հստակ, գիտականորեն հիմնավորված կառուցվածքով՝ հետազոտության գլխավոր նպատակ, հետազոտության երկրորդական նպատակներ, հետազոտության մեթոդ, հարցաթերթիկի հարցերի համառոտ նկարագրում և սոցիոլոգիական հարցման տվյալների ու արդյունքների վերլուծություն, 26 աղյուսակ, 2 գծապատկեր: Նշենք, որ հարցաթերթիկը ներկայացված է հավելվածում:

Սույն սոցիոլոգիական հետազոտությունը բնութագրական տեսակ ունի տվյալների հավաքագրման առումով, իսկ նպատակի առումով՝ կիրառական: Անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքներն աչքի են ընկնում հուսալիության առումով, որն ապահովել է բովանդակային հավաստիության մեթոդը, և դրա հիման վրա են մշակվել

հարցերը: Իսկ հարցաթերթի հավաստիությունը գնահատվել է Քրոնբախի ալֆայի քանաձևի միջոցով և ստացել են 0.87 մեծությունը, ինչը վկայում է մշակված հարցերի հավաստիության բարձր մակարդակի մասին:

Բավականին հարուստ է սոցիոլոգիական հարցման բազան. ուսումնական հաստատությունների տնօրեններ, ուսուցիչներ, բուհերի ղասախոսներ, աշխատավորներ: Ըստհանուր թվից՝ 384 թերթիկից 342-ը համարվել են հավաստի և ենթարկվել վերջնական մշակման ու վերլուծության:

Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ տրված են համակողմանի վերլուծություն, ճիշտ մեկնաբանություններ և գնահատականներ: 4-րդ գլխի ուսումնասիրությունը մեզ ցույց տվեց, որ սոցիոլոգիական հարցումների արդյունքները հաստատում են հետազոտության տեսական դրույթները:

Ուշագրավ է այն փաստը, որ այս գլխի վերջում ներկայացվել են շատ բովանդակալից, կառուցողական առաջարկություններ մեծահասակների կրթությունն Իրանում առավել բարձր մակարդակի հասցնելու և զարգացնելու ուղղությամբ:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որոնք բաղկացած են 8 կետից և լիովին համապատասխանում են հետազոտության խնդիրներին, նպատակին, արտացոլում են հետազոտության հիմնական արդյունքները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հստակ ձևակերպված են, և դրանք կարելի է համարել հետազոտության տրամաբանական ավարտ:

Նշենք, որ օգտագործված գրականության ցանկը բավականին հարուստ է (90), բազմազան է լեզուների առումով՝ պարսկալեզու գրականություն, անգլալեզու աղբյուրներ, կան նաև համացանցային աղբյուրներ:

Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական գիտական հետազոտության առաջադրվող պահանջներին, հետազոտությունն ունի գիտական նշանակություն մանկավարժության բնագավառում: Աշխատանքն արժեքավոր է և օգտակար բուհերի բարեփոխման, հասարակության զարգացման գործընթացներում, մեծահասակների կրթության կազմակերպման հարցերում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլվել է սեղմագրում և հրատարակված հոդվածներում:

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ կան մի քանի նկատառումներ՝

- Աշխատանքի 2.6 և 2.7 ենթագլուխները կարելի էր միավորել, ինչը բույլ են տալիս այդ ենթագլուխների ծավալը և բովանդակությունը:
- Աշխատանքում գործածվել են օտարալեզու եզրույթներ (ինֆորմացիա, ֆորմալ, ոչ ֆորմալ և այլ), կարծում ենք կարելի էր օգտագործել դրանց հայերեն տարբերակները:
- Յուրաքանչյուր զիսի ավարտին կարելի էր ներկայացնել ամփոփում:
- Աշխատանքում նկատվում են որոշ մտքերի կրկնություններ:
- Աշխատանքը զերծ չէ տեխնիկական վրիպակներից:

Վերոնշյալ նկատառությունները չեն ստվերում ատենախոսության գիտական նշանակությունը: Սույն ատենախոսությունը կուռ, համապարփակ գիտական հետազոտություն է:

Համիլոնեզա Կամիարի «Մեծահասակների կրթության հիմասինդիրն Իրանի կրթության համակարգում» խորագրով գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին ԺԳ.00.01 – «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

Ընդդիմախոս՝

Ուուզաննա Արամայիսի Մարդոյան

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Օ. Մարդոյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

/ Շիրակի պետական համալսարանի գիտական քարտուղար,

կ.գ.թ., դոցենտ

Կարինե Պետրոսյան



26.12.2024թ.